

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի Յունիսի 7-ին, կիրակի օրը, առաւօտեան, Հոգեգալստեան տօնին, Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով օրուայ պատարագիչ Գերաշնորհ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանը Մայր տաճարում կուսակրօն քահանայ ձեռնադրեց Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1985—1986 տարիների շրջանաւարտներ՝

ա. Հայկ սրկ. Զուլչեանին, ծնեալ 1959 թ. Մալաթիայում (Թուրքիա), վերանուանելով Տ. Սեպուհ աբեղայ.

բ. Ռոբերտ սրկ. Ադամեանին, ծնեալ 1963 թ. Աբադանում (Իրան), վերանուանելով Տ. Սիոն աբեղայ.

գ. Սամուէլ սրկ. Կճոյեանին, ծնեալ 1957 թ. Երևանում, վերանուանելով Տ. Նաւասարդ աբեղայ.

դ. Ռազմիկ սրկ. Իսախանեանին, ծնեալ 1963 թ. Հազարջրիք գիւղում (Իրան), վերանուանելով Տ. Սերովբէ աբեղայ.

ե. Գէորգ սրկ. Մկրտչեանին, ծնեալ 1961 թ. Եղեգնաձորի շրջանի Ռինդ գիւղում, վերանուանելով Տ. Աբրահամ աբեղայ:

Նոյն օրը Մայր տաճարում, երեկոյեան ժամերգութեան ընթացքում, կատարուեց վեղարի տուչութեան արարողութիւն, որից յետոյ նորընծաները առաջնորդուեցին Վեհարան և ստացան Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը:

Նորապսակ աբեղայ հայրերը 1987 թ. Մարտին յաջողութեամբ յանձնել էին կուսակրօն քահանայութեան համար սահմանուած քննութիւնները:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
16 Յունիս 1987 թ.